ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ալիրեզա Փարվիզ Ադկանիան

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանաշնորհման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Մանասերյան Թաթուլ Նորայրի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր **Սաֆարյան Արմեն Գեորգիի** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Սահակյան Մարիա Արմենակի**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Մ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հուլիսի 17-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագի-տական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունիսի 1-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տ.գ.դ., պրոֆեսոր Տ.Ս.Մարտիրոսյան

Հետազոտության թեմայի արդիականությունը

Պարենի համաշխարհային գագաթնաժողովում 1974 թվականին առաջին անգամ կիրառվել է «Պարենային անվտանգություն» տերմինը, ինչը սահմանվել է որպես. «Շուկաներում պարենային ապրանքների կայունության և առկայության պահպանում՝ աշխարհի բոլոր երկրների համար»: Սակայն, հասարակական կյանքի զարգացման ներկա փուլում պարենային անվտանգության ընկալումը զգալիորեն ընդլայնվել է և 1996 թվականին Պարենի համաշխարհային գագաթնաժողովը պարենային անվտանգությունը սահմանել է նոր՝ առավել ընդլայնված ձևակերպմամբ. «Պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակով, առողջության համար անվտանգ, հասարակության սոցիալ-մշակութային և պատմական առանձնահատկությունների տեսանկյունից ընդունելի, լիարժեք պարենով ապահովմանը, հասանելի լինելով հասարակության յուրաքանչյուր անդամի և կարող է սպառվել նրա կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում (այդ թվում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ)՝ առողջ և բարեկեցիկ կյանք վարելու համար»:[1]

Վերոնշյալ սահմանումից ակնհայտ է դառնում, որ պարենային անվտանգության արդյունավետ կառավարումը առնչվում է ոչ միայն ազգային, այլև վերազգային խնդիրներին, քանի որ այն ուղղակիորեն փոխկապակցվում է ՄԱԿ-ի մինչև 2030 թ. սովին վերջ դնելու, բարելավված սննդի ապահովման և կայուն գյուղատնտեսության խթանման կայուն զարգացման 2-րդ նպատակի հետ, որին հանձնառու են երկրների կառավարությունները և կոնկրետ գործողություններ է ձեռնարկում այն իրագործելու համար: Այս առումով արդիական է համարվում պարենային անվտանգության կառավարումը Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության համագործակցության շրջանակում:

---

[1] Food and agriculture organization of the United Nations, Rome, 1996, World

Հատկանշական է, որ այս հարևան երկրներին հատուկ են մի շարք սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս կառուցելու պարենային անվտանգության կառավարման միասնական համակարգ: Նախնառաջ, երկու երկրներն էլ գտնվում են տնտեսական շրջափակման միջավայրում և ունեն առավել սուր պատերազմական սպառնալիքներ, որոնք լրացուցիչ նախապայմաններ են առաջացնում պարենային անվտանգության առավել արդյունավետ կառավարման գծով՝ հատկապես արտակարգ իրավիճակներում: Բացի այդ, Իրանի Իսլամական Հանրապետությունն (ԻԻՀ) և Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) դասվում են տնտեսապես զարգացող երկրների շարքին և ունեն նույնատիպ ագրոպարենային զարգացման համակարգային խնդիրներ՝ խելացի գյուղատնտեսության կազմակերպման, պարենային համակարգի թվային կառավարման փոխակերպման, ագրոբիզնեսի կայուն զարգացման գծով:

Ուստի, պարենային ապահովման կառավարման մի շարք հիմնահարցեր համընդհանուր են այս երկու երկրների համար և ոլորտային համագործակցության հնարավորություններ են ստեղծում: Սակայն, դեռևս լոգիստիկ արժեշխթաների բացակայությունը, ինչպես նաև պարենամթերքի արտադրման և իրացման էկոհամակարգերով փոխլրացնող բացակայությունը ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև խոչընդոտներ են ստեղծում պարենային անվտանգության համակարգային կառավարման ոլորտում:

Այս առումով, կարևորվում է երկու երկրների պարենային հաշվեկշիռների ներդաշանկեցումը, սննդամթերքների արտադրման փոխլրացումները, ագրոարդյունաբերական համալիրների համագործակցությունը, որոնք համակարգային կառավարման կարիք ունեն: Հետևաբար, նաև իրենց լուծումներին են սպասում այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են պարենային անվտանգության կառավարման նպատակադրումների հստակեցումն ու կառավարչական որոշումների արդյունավետության գնահատումը տարբեր շահառուների կողմից, ինչն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է կատարել առաջարկություններ երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Ելնելով նպատակից, հետազոտության խնդիրներն են հանդիսացել.

- ուսումնասիրել Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ոլորտի խնդիրները,
- ելնելով Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման համանման խնդիրներից, մշակել անվտանգային ոլորտում երկրների համագործակցային կառավարման շրջանակ,
- մշակել պարենային անվտանգության ապահվման սպառնալիքների աստիճանակարգ, նպատակ ունենալով հստակեցնելու կառավարման ուղղությունները վերազգային, ազգային և լոկալ մակարդակներով,
- առաջարկել անվտանգության կառավարման նպատակադրումների ցուցիչներ, նպաստելով պարենի ապահովման և հասանելիության, ինչպես նաև պարենամթերքի սպառման մշակույթի բարելավման գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը,
- ներկայացնել պարենային անվտանգության ապահովման շահառուների շրջանակ, նրանում արտացոլելով կառավարչական առաջընթացի ցուցիչներն ըստ շահառուների առանձին խմբերի,
- առաջարկել կառավարման շրջափուլային մոտեցում՝ հնարավորություն ստեղծելով կայացնելու անվտանգային սպառնալիքների կանխարգելման կառավարչական որոշումներ:
- մշակել պարենային անվտանգության կառավարման մոտեցումներ, որոնք հնարավորության կընձեռնեն պարբերաբար իրականացնելու անվտանգային ապահովման ներուժի վերաարժևորում՝ երկրների համագործակցության համատեքստում:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության փոխառնչության շրջանակը: Հետազոտության առարկան երկու երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության կառավարման ոլորտն է, իրեն բնորոշ կառավարչական գործիքակազմով և որոշումների կայացման բնույթով:

Հետազոտության նորույթը

Հետազոտության նորույթը՝ երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության կառավարման բարելավման առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես.

- բացահայտվել են Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ընդհանրական խնդիրները և դրա հիման վրա ներկայացվել է այդ ոլորտում երկրների համագործակցային կառավարման շրջանակ,
- առաջարկվել է պարենային անվտանգության ապահովման սպառնալիքների աստիճանակարգ, որի արդյունքում հստակեցվում են կառավարման նպատակադրումներն ու դրանց հասանելիության թիրախային վերջնարդյունքները՝ վերազգային, ազգային և լոկալ մակարդակներով,
- մշակվել են պարենային անվտանգության կառավարման նպատակադրումների ցուցիչներ, որով հնարավորություն է ստեղծվում պարենի ապահովման և հասանելիության, ինչպես նաև պարենամթերքի սպառման մշակույթի բարելավման գծով կառավարչական որոշումներ կայացումը՝ ըստ շահառուների տարբեր խմբերի,
- առաջարկվել է կառավարման շրջափուլային մոտեցում, որը հնարավորություն է ընձեռնում կայացնելու անվտանգային սպառնալիքների կանխարգելման կառավարչական որոշումներ և պարբերաբար իրականացնելու պարենային անվտանգության ապահովման ներուժի վերաարժևորում՝ երկրների համագործակցության համատեքստում:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել պարենային անվտանգության ապահովման կառավարման ոլորտին առնչվող գիտական աշխատությունները, անվտանգային սպառնալիքների կառավարման գործնական կիրառում ստացած առաջավոր փորձի արդյունքները, պարենային անվտանգության կարգաբերումների միջազգային չափանիշները:

Հետազոտությունում օգտագործվել են պարենային անվտանգության ներդրման գործիքակազմին առնչվող փորձագետների կատարված ուսումնասիրությունները, միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված հաշվետվությունները:

Հետազոտության տեղեկատվական աղբյուրներ են հանդիսացել հրապարակված պաշտոնական վիճակագրական տվյալները, ինչպես նաև պարենային անվտանգությանը առնչվող միջազգային զեկույցները:

Հետազոտական արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունը տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է՝ նվիրված պարենային անվտանգության կառավարման հիմնախնդիրներին: Այն ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ համապատասխան կառավարման համակարգի ներդրման արդյունավետության գնահատման և հայեցակարգի բացահայտման ուղղությամբ:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են կիրառվել երկրների համագործակցության տիրություում ձևավորվող պարենային անվտանգության կառավարման բնագավառում:

Հետազոտության փորձարկումը և հրատարակումները

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ տեսաբանների, ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառավարիչների հետ: Հետազոտության գիտական նորույթների առան-

ձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության Հայաստանի եվրոպական համալսարանում կազմակերպված գիտական սեմինարներում: Ատենախոսության հետազոտական վերջնարդյունքները իրենց լուսաբանում են ստացել հեղինակի կողմից հրատարակած 8 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը շարադրված է 159 էջի վրա, առանց հավելվածների: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Պարենային անվտանգություն, սահմանումներ և տեսական հիմքեր» գլխում, քննարկվում են երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության տեսական մոտեցումները: Մասնավորապես, մեկնաբանվում են միջազգային կազմակերպությունների կարգաբերումները պարենային անվտանգության ոլորտում, ներկայացվում են տարբեր երկրների հաջողված դեպքերը պարենային անվտանգության համատեղ ապահովման ոլորտում:

Աղյուսակ 1

Առաջնային պարենամթերքի ինքնաբավության աստիճանը ՀՀ-ում և ԻԻՀ-ում (%)

Պարենամթերք	ՀՀ	ԻՀՀ
Ցորեն	24,4	102,6
Եգիպտացորեն	4,7	104,1
Կարտոֆիլ	103,6	92,3
Բանջարեղեն	102,1	98,4
Պոմիդոր	127,4	92,6
Ձու	102,8	98,7
Տավարի միս	104,1	96,3
Ոչխարի միս	106,2	89,8

Աղբյուրը՝ ԻԻՀ և ՀՀ պաշտոնական վիճակագրական հաշվետվություններ:

Համեմատական վերլուծության են ենթարկվում ԻԻՀ-ի և ՀՀ-ի կողմից պարենային անվտանգության ապահովման ռազմավարական մոտեցումները, ինչպես նաև առաջնային պարենամթերքի ինքնաբավության աստիճանը (տես աղյուսակ 1), որով հիմնավորվում են

երկու երկրների միջև պարենամթերքի փոխլրացման կարևորությունն ու հնարավորությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Իրան-Հայաստան պարենային անվտանգության սպառնալիքների բացահայտումներ» գլխում, համեմատական վերլուծության են ենթարկվում երկու հարևան երկրների ագրոարդյունաբերության զարգացման նույնատիպ մարտահրավերները և առաջարկներ են արվում դրանց համատեղ լուծումների ուղղությամբ:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առևտրաշրջանառությունը հիմք է ստեղծում երկու երկրների պարենային անվտանգության շրջանակներում փոխանակումների համար: Դեռևս արտահանման և ներմուծման ծավալները երկու երկրների միջև բավարար մակարդակի չեն (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները (1000 ԱՄՆ դոլար)

Ցուցանիշ	2022		2023		2024	
	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում
Ընդամենը՝ որտեղ	5419064	8775859	8552015	12757919	13136420	17065146
ԻԻՀ	110370	599821	94549	597947	107942	629154

Աղբյուրը: Հայաստանի վիճակագրական տարեգիրք՝ 2025, էջեր 547 և 549:

Գոյություն ունեն երկրների միջև գյուղատնտեսական համագործակցության միջոցով պարենային անվտանգությունը բարձրացնելու տարբեր եղանակներ: Նրանք կարող են համաձայնությունների հասնել առևտրի և գյուղատնտեսական արտադրանքի ու տեխնոլոգիաների ներմուծման և արտահանման սակագների վերաբերյալ: Նրանք կարող են նաև համագործակցել այս ոլորտում գիտական հետազոտությունների և զարգացման, ինչպես նաև գյուղատնտեսական ապահովագրության ոլորտներում:

Համագործակցության լուծումներից մեկը նաև երկրների միջև գյուղատնտեսական ընդհանուր ֆոնդային բորսայի գոյությունն է: Նման բորսան կարող է նպաստել գյուղատնտեսական ապրանքների առևտրին մասնակից երկրների միջև և օգնել կայունացնել գները և մատակարարումը տարածաշրջանում: Այնուամենայնիվ, նման բորսայի ստեղծումը պահանջում է մասնակից երկրների միջև գործունեության համակարգում: Ուստի, պարենային անվտանգության կառավարումը ներառական բնույթ է կրում և ապահովվում է ոչ միայն ազգային՝ այլև վերազգային նպատակադրումների իրագործում (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1 Պարենային անվտանգության սպառնալիքների կառավարման թիրախների աստիճանակարգը[2]

Գլոբալ առումով, պարենային անվտանգության սպառնալիքների կառավարման նպատակադրումներն են հանդիսանում.

-ապահովել անվտանգ և սննդարար պարենամթերքի հասանելիություն բոլորի համար,

- ապահովել կայուն սպառման մոտեցումներ,

- խթանել բնության և կենսաբազմազանության պահպանության ու

[2] Կազմել է ատենախոսը:

պաշտպանության տեսանկյունից անվտանգ մթերքների արտադրություն,

- ապահովել սոցիալ-քաղաքական ցնցումների և բնական աղետների նկատմամբ պարենային անվտանգության դիմակայունություն:

Ազգային մակարդակի տեսանկյունից պարենային անվտանգության սպառնալիքների կառավարման խնդիրները թիրախավորվում են հետևյալ առանցքային ուղղություններով.

- պարենային անվտանգության թուլացման սպառնալիքների վաղաժամկետ բացահայտում և չեզոքացում,
- պարենային մատչելիության, հասանելիության և ինքնաբավության մակարդակների ապահովում,
- պարենային անվտանգության արդյունավետ կառավարման հաշվետվողականության և ռիսկերի չեզոքացման համակարգի ստեղծում,
- պարենաապահովման պահուստների ձևավորման և արտակարգ իրավիճակներում սննդամթերքների բաշխման ենթակառուցվածքների ներդաշնակ գործունեության ապահովում:

Զուգահեռաբար, պարենային անվտանգության սպառնալիքների կառավարման գծով դրվում են նաև լոկալ անվտանգային խնդիրներ, ինչպիսիք են.

- ✓ կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակի ապահովում (էներգետիկ արժեքով հաշվարկված),
- ✓ պարենամթերքին մատչելիության առնվազն նվազագույն մակարդակի ապահովում,
- ✓ նվազագույն պարենային զամբյուղին հասանելիության ապահովում,
- ✓ պարենամթերքների թափոնների կառավարում և սպառողների շրջանում համապատասխան գրագիտության մակարդակի բարձրացում:

Ատենախոսության երրորդ՝ «Պարենային անվտանգության կառավարման հիմնախնդիրները երկրների համագործակցության համատեքստում» գլխում, քննարկվում են ռազմավարական մասնակցային կառավարման մոտեցումներ:

Պարենային անվտանգության կառավարման համակարգը մեկ ընդհանուր կենտրոնից չի կազմակերպվում և կրում է մասնակցային

բնույթ՝ ընդգրկելով բազմազան շահառուների (տես գծապատկեր 2), որոնցից յուրաքանչյուրը հետամուտ է լինում կառավարչական տարբեր նպատակադրումների:



Գծապատկեր 2 Պարենային անվտանգության ապահովման մասնակցային կառավարման շահառուների շրջանակը[3]

[3] Կազմել է ատենախոսը:

Աղյուսակ 3

Պարենային անվտանգության կառավարման նպատակադրումներն ըստ շահառուների թիրախային խմբերի և ցուցիչների[4]

Թիրախներ	Ն.շ.	Նպատակադրումներին հասանելիության չափիչներ
Վերազգային (E1)		
Պարենամթերքի հասանելիություն	E_{11}	սննդի հասանելիության մակարդակ (%)
Պարենամթերքի մատչելիություն	E_{12}	մատչելիության մակարդակ (%)
Դիմակայունություն և ապահովություն	E_{13}	արտակարգ իրավիճակներին դիմակայունության կարողություն %
Կայունություն և ապահովություն	E_{14}	Կայուն զարգացման սկզբունքներով պարենամթերքի արտադրության մակարդակ %
Ազգային (E2)		
Պարենամթերքի առկայություն	E_{21}	Պարենային ազգային հաշվեկշիռ (դրամային արժեք)
Պարենամթերքի պահանջվածություն	E_{22}	Ինքնաբավության աստիճան %
Պարենամթերքի առկայություն	E_{23}	Պարենամթերքի պաշարման աստիճան %
Պարենային անվտանգության սպառնալիքներ	E_{24}	պարենային ապահովության սպառնալիքների կանխարգելման կարողություն (բալ)
Լոկալ (E3)		
Պարենամթերքի սպառման մշակույթ	E_{31}	Պարենամթերքի թողարկման և սպառման կորուստների աստճան (%)
Սննդամթերքի բավարար ընդունում	E_{32}	Էներգետիկ պահանջված արժեքով սննդամթերքի ընդունման չափ (բալ)

[4] Կազմել է ատենախոսը:

Հետևաբար, նպատակահարմար է համարում պարենային անվտանգության կառավարման նպատակադրումների դասակարգումը ոչ միայն ըստ շահառուների թիրախային խմբերի, այլև ըստ չափելիության ցուցիչների (տես աղյուսակ 3): Նման պարագայում, պարենային անվտանգության կառավարման շահառուներին հարավորություն է ընձեռնվում մշտադիտարկման ենթարկել նպատակադրումներին հասանելիության ցուցիչները և միջոցառումներ ձեռնարկել՝ պարենային անվտանգության սպառնալիքների կանխարգելման ուղղություններով (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3 Պարենային անվտանգության կառավարման առաջարկվող շրջափուլային մոտեցումը[5]

[5] Կազմել է ատենախոսը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության համատեքստում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների տեսամեթոդաբանական ուսումնասիրությունների հիման վրա կատարվել են մի շարք եզրակացություններ և ներկայացվել առաջարկություններ՝ պարենային անվտանգային միջավայրի կառավարման բարելավումների գծով:

1. Պարենային անվտանգության ապահովումը համարվում է վերազգային խնդիր և ներառվում է ՄԱԿ-ի կողմից ընդունված կայուն զարգացման նպատակների շրջանակում: Դեռևս ՄԱԿ-ի հովանո ներքո գործող Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը բազմիցս անդրադարձ է կատարել պարենային անվտանգության ապահովման կարգաբերումներին, թիրախավորելով այն առանցքային գործոնները, որոնք նպաստում են իրավական, կազմակերպական, և այլ բնույթի միջոցառումների համալիր իրագործմանը՝ ազգաբնակչության պարենով ապահովման շրջանակում: Հետևաբար, այդ կարգաբերումները առավել արդյունավետ են համարվում, երբ դառնում են կառավարելի:

2. Պարենային անվտանգության ապահովման գործընթացի կառավարումը դուրս է գալիս մեկ երկրի շրջանակից և առավել արդյունավետ է դառնում երկրների միջև համագործակցության շրջանակում: Այս առումով, բացառություն չեն կազմում ԻԻՀ-ն և ՀՀ-ն, ունեն պարենային ապահովվածության համանման խնդիրներ: Նախևառաջ, այդ երկու պետությունները դասվում են տնտեսապես զարգացող երկրների շարքին և դեռևս ակտիվ դրսևորումներ չեն ցուցաբերում «խելացի գյուղատնտեսության», նորագույն տեխնոլոգիաներով ագրոբիզնեսի զարգացման, ինովացիոն համակարգերով պարենային անվտանգության ապահովման հարցերում: Բացի այդ, անգամ լինելով հարևան երկրներ, դեռևս ԻԻՀ-ն և ՀՀ-ն չունեն պարենամթերքի արտադրման և պաշարման պակասուրդի փոխլրացման ռազմավարական մշակումներ:

3. Պարենային անվտանգության ապահովման կառավարումը երկրների համագործակցության համատեքստում դառնում է առավել արդյունավետ, երբ այն մեկնաբանվում է վերազգային, ազգային և լոկալ մակարդակների տեսանկյունից: Վերազգային նպատակադրումները

թիրախավորում են պարենամթերքի հասանելիության, մատչելիության, ինչպես նաև պարենային ապահովվածության կայունության կառավարումը։ Ազգային մակարդակով պարենային ապահովվածության կառավարման առանցքային թիրախներ են հանդիսանում պարենամթերքի առկայության և պարենային անվտանգության խաթարման սպառնալիքները։ Իսկ լոկալ մակարդակով, պարենային անվտանգության կառավարումը հիմնականում թիրախավորվում է պարենամթերքի սպառման մշակույթի բարելավումներին։

4. Հետազոտությունում առաջարկվել են պարենային անվտանգության կատարողականի առանցքային ցուցիչներ, որով հնարավորություն է ստեղծվում գնահատելու անվտանգային գործընթացների ոչ միայն արդյունավետությունը, այլև ռազմավարական նպատակադրումներին հասանելիության աստիճանը։ Կատարողականի առանցքային ցուցիչները ներկայացվում են գործակիցներով, որոնք թույլ են տալիս կառավարչական որոշումներ կայացնելիս անվտանգային տարբեր գործոնների ազդեցությունը քննարկել ընդհանրական չափելիությամբ և համադրելի դաշտում։ Հետևաբար, կատարողականի առանցքային ցուցիչների կիրառումը համեմատական վերլուծությունների հարթակ է ստեղծում ԻԻՀ-ՀՀ համագործակցության համատեքստում։

5.Պարենային անվտանգության կառավարումը առաջարկվել է իրականացնել շրջափուլային մոտեցմամբ, նախևառաջ սահմանելով անվտանգության ապահովման նպատակադրումների շրջանակ։ Այս դեպքում, ձևավորվում է պարենային անվտանգության գծով սահմանված կատարողականի առանցքային ցուցիչների մշտադիտարկման և հայտնաբերված շեղումների արձանագրման հնարավորություն, որը կարևոր դերակատարում է ունենում պարենային անվտանգության սպառնալիքների կանխարգելման գծով կառավարչական որոշումների կայացման գործընթացում։

6. Ներկայացվել է պարենային անվտանգության ապահովման կառավարման միջազգային առաջավոր փորձը և դրա ներդրման հնարավորությունների շրջանակը Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության շրջանակում։ Քննարկվել է պարենային անվտանգության գծով կառավարչական որոշումների այն շրջանակը, որը հատուկ է այս երկու հարևան երկրներին տարածաշրջանային ներկա զարգացումների համատեքստում։ Մասնա-

վորապես, հաշվի են առնեվել երկու հարևան երկրների միջև առկա լոգիստիկ սահմանափակումները, արտաքին սոցիալ-տնտեսական ճնշումները, պատերազմների սպառնալիքները, ինչպես նաև տնտեսական փոխհարաբերությունների դեռևս պահպանվող ոչ բավարար ակտիվությունը:

Հետազոտական առանցքային վերջնարդյունքները և գիտական նորույթի մեկնաբանումները ներկայացված են ատենախոսի կողմից հրատարակված հետևյալ հոդվածներում:

1. Alireza Adkanian, Current State of Food Security in Armenia, Alternative Quarterly Journal, Vol. 1, No 48 (2020), pp: 445-453 https://alternative.am/2020-2/
2. Alireza Adkanian, Effects of sanctions on food security in Iran, Alternative Quarterly Journal, Vol. 4, No 2(2020), pp:26-39 https://alternative.am/2020-2/
3. Alireza Adkanian, Potential of Food Production in Armenia, Alternative Quarterly Journal, Vol. 1, No 18 (2021) https://alternative.am/wp-content/uploads/2023/12/2021-June.pdf
4. Alireza Adkanian, Sargsyan, Nairi; Khosravi Meysam, Strengthening the customs and road facilities to expand the trade of foodstuffs and agricultural products, Alternative: Quarterly Academic Journal, Vol. 2, No 15 (2024), pp: 135- 142 https://alternative.am/2024/07/02/alternative-quarterly-academic-journal-volume-2-2024-april-june/
5. Alireza Adkanian, Sargsyan, Nairi, Agricultural And Food Security Cooperation As A Pathway To Peace And Reconciliation Between Countries, Scientific Journal Economics, Finance and Accounting, Vol. 2 No. 14 (2024) https://efa.am/index.php/efa/article/view/69
6. Alireza Adkanian; Khosravi Meysam, The importance of establishing joint agricultural and food research centers in Iran and Armenia, Alternative: Quarterly Academic Journal, Vol. 4, No. 7 (2024): pp: 59-67 https://alternative.am/wp-content/uploads/2025/01/December-2024-lim.pdf
7. Alireza Adkanian, Methodological issues of food security management, Scientific Journal Economics, Finance and Accounting, Vol. 2 No. 16 (2025): 2025-2, pp: 15-25 https://doi.org/10.59503/10.59503/29538009-2025.si-1
8. Alireza Adkanian, Food security spatial management issues: Iran-Armenia case study, Scientific Journal Economics, Finance and Accounting, No. SI-1 2025, pp: 15-24, https://doi.org/10.59503/29538009-2025.si-1-15

АЛИРЕЗА ПАРВИЗ АДКАНИАН

ПЕРСПЕКТИВЫ СОТРУДНИЧЕСТВА МЕЖДУ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКОЙ ИРАН И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ В СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТЬЮ

афтореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление экономикой, ее сферами». Защита диссертации состоится 17-го июля 2026 г. в 14^{00} часов, на заседании специализированного совета 014 Комитета высшего образования и науке Республики Арменияпо экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяана 128.

Целью исследования является разработка рекомендаций в контексте сотрудничества между странами по совершенствованию системы управления продовольственной безопасностью.

Исходя из этой цели, были поставлены следующие задачи исследования:

- предложение показателей целей управления безопасностью, способствующих принятию эффективных управленческих решений по улучшению продовольственной безопасности;
- представление группа бенефициаров обеспечения продовольственной безопасности, отражающей в ней показатели прогресса управления в соответствии с отдельными группами бенефициаров;
- предложение подхода к циклу управления, создающего возможность принятия управленческих решений по предотвращению угроз безопасности.

- разработать подходы к управлению продовольственной безопасностью, которые позволят проводить периодическую переоценку потенциала в области безопасности в контексте сотрудничества между странами.

Новизна исследования заключается в представлении предложений по совершенствованию управления продовольственной безопасностью в контексте сотрудничества между странами. В частности:

- выявлены общие проблемы обеспечения продовольственной безопасности в Исламской Республике Иран и Республике Армения, на основе которых представлена концептуальная основа для совместного управления странами в этой области;
- предложена иерархия угроз продовольственной безопасности, в результате которой уточняются цели управления и целевые результаты их достижения на наднациональном, национальном и местном уровнях;
- разработаны индикаторы целей управления продовольственной безопасностью, которые создают возможность принятия управленческих решений по улучшению продовольственной безопасности и доступности, а также культуры потребления продуктов питания, в соответствии с различными группами бенефициаров;
- предложен подход, основанный на управленческом цикле, который предоставляет возможность принятия управленческих решений по предотвращению угроз безопасности и периодической переоценке потенциала обеспечения продовольственной безопасности в контексте сотрудничества между странами.

ALIREZA PARVIZ ADKANIAN

PROSPECTS FOR COOPERATION BETWEEN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN AND THE REPUBLIC OF ARMENIA IN THE FOOD SECURITY MANAGEMENT SYSTEM

The abstract of the thesis for receiving the degree of PhD in economics in the specialty 08.00.02 – "Economics, Management of the Economy and its spheres". The defense of the thesis will take place on 17-th July, 2026, at 14^{00} o'clock, at 014 Professional Council of Economics of the committee on Higher Education and Science of the Repuclic of Armenia at the Armenian State Univercity of Economic: (Nalbandyan str. 128, Yerevan, 0025.

The aim of the dissertation is to develop recommendations for improving food security management systems in the context of intercountry cooperation.

Based on this objective, the following research objectives were proposed:

- to propose indicators for food security management objectives that facilitate effective management decisions to improve food security;
- to present a food security beneficiary group, reflecting management progress indicators for individual beneficiary groups;
- to propose an approach to the management cycle that enables management decisions to prevent security threats;
- to develop approaches to food security management that will enable periodic reassessment of security capacity in the context of intercountry cooperation.

The novelty of the study lies in the proposals for improving food security management in the context of intercountry cooperation. Partiulart:

- common challenges in ensuring food security in the Islamic Republic of Iran and the Republic of Armenia are identified, based on which a conceptual framework for joint management between the countries in this area is presented;
- a hierarchy of food security threats has been proposed, clarifying management objectives and target outcomes for achieving them at the supranational, national, and local levels;
- indicators of food security management objectives have been developed, enabling management decisions to improve food security and accessibility, as well as food consumption culture, in accordance with various beneficiary groups;
- an approach based on a management cycle has been proposed, enabling management decisions to prevent security threats and periodically reassess the potential for food security in the context of cooperation between countries.